

ՍԱՂՄՈՍ 71

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Ազտության համար ծերունու աղոթքը <u>MT ներածությունն չկա</u>	Աստված փրկության վեմը	Անձնական թշնամիներից ազատվելու ձեր երկրպագուի աղոթք	Տարեց մարդու աղոթքը	Ծերունու աղոթք
71:1-6	71:1-3 71:4-6	71:1-3 71:4-6	71:1-3 71:4-6	71:1-2 71:3-4 71:5-6
71:7-11	71:7-8 71:9-11	71:7-11	71:7-11	71:7-8 71:9-10 71:11-12
71:12-16	71:12-13 71:14-16	71:12-16	71:12-16	71:13 71:14-15 71:16-17
71:17-21	71:17-18 71:19-21	71:17-18ա 71:18բ-21	71:17-21	71:18ա 71:18բ-21
71:22-24	71:22-24	71:22-24	71:22-24	71:22-24

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԳ ՅԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԼՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնությունն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն

2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՅՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 71:1-6

¹Քեզ վրա, ո՛վ ՏԵՐ, հույս դրեցի,
 Թող հավիտյան չամաչեմ:
²Քո արդարությամբ ինձ ազատագրի՛ր,
 Ու խուսանավելու հնա՛ր տուր,
 Ականջդ թեքի՛ր ու փրկի՛ր ինձ:
³Ինձ համար ամուր բնակավայր եղիր,
 Որտեղ միշտ կարող եմ հանգրվանել .
 Դու ինձ փրկելու հրաման ես տվել,
 Քանի որ Դու ես իմ վեմն ու ամրոցը:
⁴Աստվա՛ձ իմ, ամբարշտի ձեռքից,
 Անարդար ու դաժան մարդու ձեռքից փրկի՛ր ինձ:
⁵Քանի որ Դու ես իմ հույսը, իմ ՏԵՐ Աստվածը .
 Մանկությունիցս ի վեր Դու ես իմ վստահությունը:
⁶Ես Քո վրա եմ հաստատված արգանդից .
 Մորս որովայնից Դու ես ինձ վերցրել,
 Իմ փառաբանությունը միշտ Քո մասին պիտի լինի:

71:1-6 Այս բացման պարբերությունը հստակ հայտնում է հեղինակի մտադրությունը: Նկատե՛ք որ MT ներածություն չկա: Շատ մեկնաբաններ ենթադրում են, որ սա մի ծերունու աղոթք է (տես՝ Սաղմ . 71:9,18), որը հալածվելիս է եղել (տես՝ Սաղմ . 71:4,10,13,24):

71:1 «հույս դրեցի» Այս ԲԱՅԻ (BDB 340, KB 337, *Qal* ԸՂՁԱԿԱՆ) համար տես Սաղմոս 2:12 և 5:11-12 գրառումները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱՍԱՆ

❖ «թող երբեք/հավիտյան չամաչեմ» Այս ԲԱՅԸ (BDB 101, KB 116) *Qal* ԸՂՁԱԿԱՆ է:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՈՒԹ ԵՐ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՍԱՍՏՈՎ

71:2 Առաջին երկու ԲԱՅԵՐԸ «ազատել» (BDB 664, KB 717, տես՝ Սաղմ . 70:1) և «փրկել» (BDB 812, KB 93) երկուսն էլ ԱՆԿԱՏԱՐՆԵՐ են, որոնք մատնանշում են շարունակական գործողություն: Երրորդ հոմանիշը՝ «փրկել» (BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) գտնվում է Սաղմ . 70:2բ:

Նկատե՛ք աղոթքի հիմքը (այսինքն՝ երկու *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐԸ, Սաղմ . 71:2բ) սաղմոսերգուի արժանիքները չեն, այլ ՅԱՀՎԵԻ արդարությունը (տես՝ Սաղմ . 71:16):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

❖ «ականջդ թեքի՛ր» Այս ԲԱՅԸ (BDB 639, KB 692, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ) մարդաբանական կերպ է (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾ ՆԿԱՐԱԳՐՎԱԾ ՈՐՊԵՍ ՄԱՐԴ (անտրոպոմորֆիկ լեզուն)) Աստծուն աղաչելու, որ լսի սաղմոսերգուի աղոթքը (տես՝ Սաղմ . 17:6, 31:2, 86:1, 88:2, 102:2): Այս Սաղմոսի առաջին երեք համարները նման են Սաղմոս 31:1-3:

71:3 «Ինձ համար ամուր բնակավայր եղիր» «Բարձր անանցանելի ժայռի» (BDB 700, այսինքն՝ ամրոցի, Սաղմ.71:3գ) Աստծո մասին հասկացությունը երևում է Սաղմ.18:2, 31:2-3, 40:2, որը հավանաբար ակնարկում է 2 Օրինաց 32:31, 37:

«Բնակություն» (BDB 732) հասկացությունը մատնանշում է Աստծո հետ բնակվելու վայրը (այսինքն՝ տանարը, տես՝ Սաղմ.76:2), որը նման է Սաղմ.23:6, 27:4-6, 90:1, 91:9: Ազատության աղոթքը շատ ավելին է, քան միայն խնդիրների կամ թշնամիների բացակայությունը, այլ հենց հենց Աստծո ներկայությունն է (տես՝ 2 Օրինաց 33:27):

Հնարավոր է, որ «բնակության վեմը» յոջ կարող է լինել «ապաստանի վեմը» յոջ (BDB 731, տես՝ Սաղմ.31:2): UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 305) «բնակություն» բառը գնահատում է “C” (բավականին կասկածելի):

❖ **«Դու ինձ փրկելու հրաման ես տվել»** ԲԱՅԸ (BDB 845, KB 1010, *Piel* ՎԱՂԱԿԱՏԱՐ) թարգմանվում է որպես՝

1. անցյալի հրաման՝ NASB, NKJV, NJB, REB
2. ապագայի կամ ներկայի խնդրանք՝ JPSOA

UBS Տեքստային Նախագիծը տալիս է «միշտ գալու համար դու հրամայել ես» խոսքին “C” գնահատական (այսինքն՝ բավականաին կասկածելի): NET Աստվածաշունչը պաշտպանում է UBS-ի այլընտրանքային տարբերակը՝ «պաշտպանության տուն» (RSV, NRSV), հետևելով Սաղմոս 31:2-ին:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՓՐԿՈՒԹՅՈՒՆ (ՀԿ)

71:4 «փրկիր ինձ» Այս առաջին չորս համարներում գործածվում են մի քանի հոմանիշներ՝

1. ազատագրիչ – BDB 664, KB 717, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ.7:1, 39:8, 51:14, 71:11
2. ազատիր – BDB 812, KB 930, *Piel* ԱՆԿԱՏԱՐ, Սաղմ.71:2, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ.71:4, տես՝ Սաղմ.18:48, 22:4,8, 31:1, 37:40, 43:1, 82:4, 91:14
3. փրկիր – BDB 446, KB 448, *Hiphil* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, Սաղմ.71:2, *Hiphil* ԱՆՈՐՈՇ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ, Սաղմ.71:3. կիրառվել է 57 անգամ Սաղմոսներում:

❖ **«ձեռք»** Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՁԵՌՔ

❖ **«ամբարիշտը»** Տես Սաղմոս 1:5, 5:10 գրառումները: Նկատե՛ք, որ այստեղ կիրառվել են երեք բառ՝

1. ամբարիշտը – BDB 957
2. անարդարը – BDB 732
3. դաժան մարդը – BDB 330 III, KB 329

71:5-6 Նկատեք «Աղոնայ ՅԱՀՎԵ»-ին («իմ ՏԵՐ», տես՝ Սաղմ.71:16) առանձնահատուկ նկարագրող տերմինները՝

1. իմ հույսը – BDB 876, տես՝ Սաղմ.39:7, 62:5, Երեմ.14:8, 17:13
2. իմ վստահությունը – BDB 105 (տես՝ Եսայի 30:10-ի գրառումը՝ առցանց)
3. իմ ապավենը (բառացի՝ ինձ օգնեցիր) – BDB 701, KB 759, *Niphal* ՎԱՂԱԿԱՏԱՐ, տես՝ Եսայի 48:2

❖ **«մանկությունից ի վեր...արգանդից...մորս որովայնից»** Այս համագոր արտահայտությունները դարձվածքային կերպ են հաստատելու սաղմոսերգուի վստահությունը, որ Աստված մշտապես եղել է նրա հետ և նրա համար (տես՝ Սաղմ.22:9-10): Սրանք գործածվում են Իսրայելի համար Եսայի 46:3-ում:

71:6

NASB, NRSV

«ինձ վերցրել ես . . ից»

NKJV

«վերցրել ես . . . դուրս»

JPSOA

«օգնություն»

LXX

«ապաստարան»

MT տալիս է «կտրել» (BDB 159, KB 186, *Qal* ԴԵՐԲԱՅ), որը հնարավոր է այլաբանորեն նշանակում է Աստծո կողմից պորտալարը կտրելուն (այսինքն՝ չծնված երեխայի մտերմիկ կապը, ինչպես Սաղմ .22:9-10, 139:13-16, Երեմ . 1:5):

Մյուս տարբերակը՝ «. . ից», «քաշել» կամ «գորություն/օգնություն» (LXX) ներառում է շտկում:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 71:7-11

⁷Մի զարմանալի բան թվացի շատերին,

Բայց իմ գորավոր ապավենը Դու ես:

⁸Բերանս թող Քո գովաբանությամբ լցվի, ամեն օր՝

Քո փառաբանությամբ ու մեծարանքով:

⁹Ծերության ժամանակ մի՛ թողնիր ինձ .

Ուժ պակասած ժամանակ ինձ մի՛ լքիր:

¹⁰Քանի որ թշնամիներս իմ դեմ են խոսում

Ու իմ անձի համար որոգայթ լարողները միասին բանսարկում են,

¹¹Ասելով՝ «Աստված լքել է նրան . հալածեցե՛ք ու բռնեցե՛ք նրան,

Քանի որ ոչ մեկը չկա, որ ազատի նրան» .

71:7-11 Այս պարբերությունը նկարագրում է մի ծերունի սրբի վախերը: Ըստ երևույթին նրա տարիների փորձառությունը պատճառ էր, որ ոմանք հարցնում էին նրան Աստծո ներկայության և հոգածության մասին: Սաղմոսներում «ազատել» (BDB 664, KB 717) կիրառվում է մեծամասամբ Աստծո կողմից ազատության համար:

71:1

NASB

«զարմանք»

NKJV

«հրաշք»

NRSV, REB, LXX

«նախանշան»

TEV, JPSOA

«օրինակ»

NJB

«շփոթմունք»

Եբրայերեն բառը (BDB 68) նշանակում է «հրաշք», «նշան» կամ «նախանշան»: BDB այս բառի կիրառությունն այստեղ յուրօրինակ է դիտարկում, որը վերաբերում է «մեկի, որը ՅԱՀՎԵԻ կողմից պաշտպանված է», որը նկատի ունի Սաղմ . 71:6:

71:8 Այս համարը գուգահեռվում է Սաղմ.71:6-ի փակման տողի հետ: Այս անձի կյանքը առանձնահատուկ էր «փառաբանությամբ» (BDB 239, տես՝ Սաղմ . 71:14, Սաղմ . 34:1):

71:9 Չնայած որ այս մարդը հավատքի և փառաբանության մարդ էր, նրա ծեր տարիքը և իր թշնամիների խոսքերը նրան վախ և անհանգստություն են պատճառել (տես՝ Սաղմ . 71:18):

Այս վախն արտահայտվում է երկու ԱՆԿԱՏԱՐՆԵՐԻ միջոցով, որոնք կիրառվել են որպես ՀԱՅՑԱԿԱՆՆԵՐ՝

1. մի՛ թողնիր ինձ – BDB 1020, KB 1527, *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, տես՝ Սաղմ . 51:11
2. մի՛ լքիր ինձ – BDB 736, KB 806, *Qal* ԱՆԿԱՏԱՐ

71:10-11 Այս համարներն արտահայտում են սաղմոսերգուի թշնամիների խոսքերը (կամ առնվազն նրանց մտքերի ընկալումը):

1. Աստված լքել է նրան – BDB 736, KB 806, *Qal* ՎԱՂԱԿԱՏԱՐ (մերժված լինելու մշտական վիճակ)
2. հալածեցե՛ք նրան – BDB 922, KB 1191, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
3. բռնեցեք նրան – BDB 1074, KB 1779, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
4. քանի որ ոչ մեկը չկա, որ ազատի նրան – BDB 664, KB 717, *Hiphil* ԴԵՐԲԱՅ

Սաղմոս 3:2 նույնպես նկարագրում է այն չար խոսքերը, որով մարդիկ հարձակվում են Աստծո հավատարիմ հետևորդների վրա կասկածով:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 71:12-16

¹²Ո՛վ Աստված, մի՛ հեռանա ինձնից:

Ո՛վ Աստված, ինձ օգնության շտապիր:

¹³Թող ամաչեն ու կորչեն իմ հոգու հակառակորդները,

Նախատինքով ու անպատվությամբ թող ծածկվեն

Ինձ վնասել ցանկացողները:

¹⁴Բայց ես միշտ պիտի հուսամ և ավելի ու ավելի պիտի փառաբանեմ Քեզ:

¹⁵Բերանս պատմելու է Քո արդարությունը,

Ամեն օր՝ Քո փրկությունը, քանի որ դրանց հաշիվը ես չգիտեմ:

¹⁶Քայլելու եմ ՏԵՐ Աստծո գործությամբ:

Քո արդարությունը՝ միայն Քոնն եմ հիշելու:

71:12-16 Այս պարբերությունն ունի երեք ասպեկտ՝

1. այս սաղմոսերգուի աղոթքը՝ Սաղմ. 71:12
 - ա. Աստծո ներկայության համար (բառացի՝ «հեռու մի մնա ինձնից») – BDB 934, KB 1221, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով, տես՝ Սաղմ. 22:11,19
 - բ. Աստծո արագ օգնությունը – BDB 301, KB 300, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. սաղմոսերգուի աղոթքները իր թշնամիների կորստյան համար, Սաղմ. 71:13
 - ա. ամաչեն – BDB 101, KB 116, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
 - բ. կորչեն – BDB 477, KB 476, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
 - գ. նախատինքով ծածկվեն – BDB 741, KB 813, *Qal* ԱՆԿԱՏԱՐ՝ կիրառված ՀԱՅՑԱԿԱՆ իմաստով
 - դ. անպատվությամբ ծածկվեն – նույն ԲԱՅԸ՝ ենթադրվում է գ-ից:
3. սաղմոսերգուի հաստատուն հավատքը՝ Սաղմ. 71:14-16
 - ա. ես միշտ պիտի հուսամ
 - բ. ավելի պիտի փառաբանեմ
 - գ. պատմելու եմ (այսինքն՝ տաճարում)
 - 1) Քո արդարության մասին
 - 2) Քո փրկության մասին
 - 3) Քո հզոր գործերի մասին
 - 4) Քո և միայն Քո արդարության մասին

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

71:13 «հակառակորդներ» Սա մի ԴԵՐԲԱՅ է («գրպատող», BDB 966, KB 1316) Սատանայի համար կիրառվող տերմինի՝ գրպատողի համար:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ

71:15 «Իմ բերանը պատմելու է» Այս ԲԱՅԸ (BDB 707, KB 765, *Piel* ԱՆԿԱՏԱՐ) հաճախ է կիրառվում Սաղմոսներում՝ հռչակելու ՅԱՀՎԵԻ բնավորությունը և գործերը երկրպագության միջավայրում (այսինքն՝ տաճարում):

1. Նրա հրաշքները՝ Սաղմ. 9:1, 26:7, 40:5, 75:1, 78:4
2. Նրա փառաբանությունը՝ Սաղմ. 9:14, 79:13, 107:21
3. Նրա գործերը՝ Սաղմ. 66:16, 118:17, 145:6,12
4. Նրա արդարությունը՝ Սաղմ. 71:15 (տես՝ Սաղմ. 35:28, 40:10)
5. Նրա ուխտի սերը և հավատարմությունը՝ Սաղմ. 88:11 (տես՝ Սաղմ. 40:10)
6. Նրա փառքը՝ Սաղմ. 19:1, 96:3 (տես՝ Սաղմ. 145:12)
7. Նրա մեծությունը՝ Սաղմ. 145:6
8. Նրա Մեսիան՝ Սաղմ. 2:7
9. Նրա անունը՝ Սաղմ. 22:22, 102:21

Այստեղ՝ այս համարում – Նրա արդարությունը և Նրա փրկությունը:

❖ **«քանի որ դրանց հաշիվը ես չգիտեմ»** Այս արտահայտությունը կարող է արտացոլել՝

1. միևնույն ճշմարտությունը, ինչպես Սաղմ. 40:5, 139:18, որ Աստծո սքանչելի գործերը չսփազանց շատ են ըմբռնելու համար
2. այս նույն ճշմարտությունը, ինչպես Հոր 42:3, Սաղմ. 139:6, որ դրանք մարդկային հասկացողությունից վեր են
3. որ դա նշանակում է «գրել» ինչը որ հակառակ է «պատմելուն» (NIDOTTE, հատոր՝ 4, էջ՝ 1288):

NASB (ԹՎՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 71:17-21

¹⁷Ո՛վ Աստված, մանկությունից ի վեր ինձ սովորեցրել ես .

Եվ մինչև հիմա Քո հրաշալի գործերն են հոչակել:

¹⁸Ու այժմ, երբ ծեր ու ճերմակահեր եմ, ո՛վ Աստված,

Ինձ մի՛ թողնիր . որպեսզի պատմեմ Քո բազկի ուժը այս սերնդին,

Եվ Քո զորությունը բոլոր նրանց, որ պիտի գան:

¹⁹Քո արդարությունն էլ շատ բարձր է, ո՛վ Աստված,

Որ մեծամեծ բաներ կատարեցիր . ո՛վ է Քեզ նման, ո՛վ Աստված:

²⁰Դու, որ մեծ ու ծանր նեղություններ ցույց տվեցիր ինձ,

Նորից ինձ պիտի կենդանացնես

Ու երկրի խորքերից նորից ինձ պիտի վեր հանես:

²¹Շատացնելու ես իմ մեծությունը

Ու բոլոր կողմերից մխիթարելու ես ինձ:

71:17-21 Այս պարբերությունը շարունակում է սաղմոսի առանցքային թեման: Այն արտահայտում է սաղմոսերգուի կողմից Աստծո բնավորության և Նրա ողորմության հաստատության հոչակումը: Սա է պատճառը, որ նա շարունակելու է պատմել Աստծո մեծության մասին (այսինքն՝ տաճարի մեջ):

71:17ա Իսրայելացիներին Մովսեսը կարգադրել էր իրենց երեխաներին սովորեցնել Աստծո մասին (տես՝ Ելից 10:125, 12:26, 13:8, 14, 2 Օրինաց 4:9, 6:7, 20-25, 11:19, 31:13, 32:46): Ազդեցիկ հավատքը հաջորդ սերնդի հավատքը դարձնում է առաջնայնություն:

71:18 Տող 1-ը Սաղմ. 71:9-ի կրկնություն է: Ուշադրություն դարձրե՛ք, որ սաղմոսերգուն զգում է, որ Աստծո մասին իր պատգամը օգնելու է իր սերնդին և գալիք սերնդին: Ահա թե ինչի համար է նախատեսված Մուրբ Գիրքը:

71:19 «հասնում է երկինքները» Սա մի դարձվածք է, որը մատնանշում է Աստծո արարող և փրկող գործերը, որոնք այնքան մեծ են և կարևոր, որ հասնում են մինչև ամպերը (տես՝ Սաղմ. 57:10):

❖ **«ո՛վ է Քեզ նման»** Սա ուղղված է բազմաստվածության, հենոթեիզմի և անիմիզմի աշխարհում ՅԱՀՎԵԻ յուրօրինակությանը: Սա է Իսրայելի բացառիկության բուն էությունը:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ:

71:20 Սա այս ընկած աշխարհում բոլոր մարդկանց առերեսվող խնդիրների ընդունելությունն է (ՀԿ-յան տերմիններ): «Երկու ճանապարհների» (տես՝ Սաղմոս 1, 2 Օրինաց 30:15,19) աստվածաբանությունը չի բացատրում կյանքը (տես՝ Սաղմոս 37, 73, և Հոբ):

❖ **«կենդանացնես . . . վեր հանես»** Մրանք կարծես թե դարձվածքներ են աշխույժ՝ կայտառ կյանքի վերականգնվելու համար, ոչ թե հարության: ՀԿ-ը չի հաստատում հանդերձյալ կյանքը (տես՝ Հոբ 14:14-15, 19:25-27, Դան. 12:2), սակայն համատեքստն այստեղ չի ակնարկում այս հասկացությունը:

❖ **«ինձ»** Հնարավոր է, որ «մեզ» ՀՈԳՆԱԿԻՆ պետք է լիներ այս տեքստում: Այդ դեպքում սա մեկ այլ օրինակ է անհատական Սաղմոսի հավաքական ամփոփման: Եվ ըստ երևույթին կգուզահեռվեր Եզեկիել 37-ի հետ (այսինքն՝ ազգային վերակենդանացում՝ արթնություն):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 71:22-24
²²Ես ել Քեզ գովելու են տավղով
Քո ճշմարտության համար, ո՛վ իմ Աստված:
Սաղմոս եմ երգելու Քեզ քնարով, ո՛վ Իսրայելի Սուրբ:
²³Քեզ սաղմոս երգելիս ցնձալու են իմ շուրթերը
Ու իմ հոգին, որ Դու փրկեցիր:
²⁴Իմ լեզուն ամեն օր Քո արդարության մասին է խոսելու,
Քանի որ ինձ չարիք կամեցողները շփոթվեցին
Ու ամոթահար եղան:

71:22-24 Սաղմոսերգուն հնարավոր է, որ եղել է Դևտական երգիչ (տես՝ Սաղմ. 71:22): Նա փառաբանում է Աստծուն Իր հավատարմության՝ ճշմարտության (BDB 54, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԿԱՆ ՎՍՏԱՀԵԼ, ՀԱՎԱՏՔ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆ ՀԿ-ՈՒՄ), սակայն նաև ամոթի և ստորացման համար, որ Նա բերեց իր թշնամիների վրա (Սաղմ. 71:24):

❖ **«Իսրայելի Սուրբը»** Սա ՅԱՀՎԵԻ համար ուխտի անունն է (տես՝ Սաղմ. 78:41, 89:18, շատ հաճախ Եսայի գրքում, տես՝ 1:4, 5:24):

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍՈՒՐԲ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ինչո՞ւ են կարծում, որ այս սաղմոսը տարեց մարդ է գրել:
2. Ինչպե՞ս է Սաղմոս 71:3 կապված Սաղմոս 23:6-ի հետ:
3. Ինչպե՞ս է Սաղմոս 71:5-6 կապված Երեմիա 1:5-ի հետ:
4. Սահմանե՛ք «հրաշք» բառը Սաղմ. 71:7-ում:
5. Սահմանե՛ք «ամաչել» բառը Սաղմ. 71:13-ում:
6. Արդյո՞ք Սաղմ. 71:19գ սովորեցնում է միաստվածություն:
7. Արդյո՞ք Սաղմ. 71:20 վերաբերում է բժշկությանը, կենսունակության վերականգնմանը, թե՞ հարությանը: